

ՎԵՅԵՐՈՐԳ ՏԱՐԻ

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարեկանը 4 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արախանյանի խանութում:

Օտարադադարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маяк“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄԱԿ

ՄԱԿ

ԼՐԱԳԻՐԸ

Կը հրատարակվի այս 1877 թվից
շաբաթը երկու անգամ: Տարեկան
գինը 7 ռուբլ, կէս տարեկանը 4 ռուբլ:

ԲՈՎԱՆԻԿԱԳՈՒԹԻՒՆ

Մեր ուսումնարանները, — Ն. Երբին ասում է
թիւն: Մի քանի խօսք լրագիրների մասին:
Նամակ Բագուից: Նամակ Խմբագրին: Նամակ
Մոզդուկից: Ներքին լուրեր: Արտաքին տե-
սույթիւն: Արեւելեան խնդիրը: Թիւրքիա: Սպա-
նիա: Ֆրանսիա: Գերմանիա: Նամակ Գերմա-
նիայից: Յայտարարութիւններ:

ԲԱՐՑՐԱՎՈՐԸ ԹՅՈՂ ԽՈՒՄԸ ԼՅՈՒՄԱՐԵԱՅԻ
Մասնագործի կողմից որ հաստատված է յո-
գուտ բարեգործական և դաստիարակական
հիմնարկութիւնների կողմից և Անդրկով-
կասում, որ գտնվում է Մեծ Իշխանուհի Օլգա
Ֆեոդորովնայի Օգոստոսիան հովանաւորու-
թեան տակ, ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՑՐՈՒ-
ԹԵԱՆ ԹՅՈՂԽՈՒԹԵԱՆԸ յայտնվում է՝

1) Վերջնական և առանց որ և է փոփոխու-
թեան ժամանակամիջոցը մասնագիտ-
ըզով գործունէութեան աւարտման,
նշանակվում է փետրվարի 12-ը 1877 թվի,
որ խաղաղութեան օրից կը կազմի մի
տարի:

2) Այդ ժամանակի ընթացքում ամբողջ
օպերացիայի հաշիւը կը վերաբերի:

3) Մասնագործը խնայարհար խնդրում
է այն անձանց և հիմնարկութիւնները, որոնք
դեռ չեն վերցրել իրանց ստացվածները, կամ
տոմսակների ծախսելու մասին հաշիւ չեն ներ-
կայացրել, շտապէին այդ կատարել, դիմելով
ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՑՐՈՒԹԵԱՆ Կալա-
տական կանտորայի (Придворная Контора)
հասցեով, Թիֆլիս:

4) Առաջիկայ փետրվարի 12-ին կը փակվի
Մասնագործի գործունէութիւնը, որ
իրան արդար պարտաւորութիւն է հա-
մարում կատարել շնորհակալութեան զգաց-
մունքով վերաբերվել դէպի այն ամեն ան-
ձինք և հիմնարկութիւններ, որոնք բարե-
հաճել են գործակցել նրա նպատակներին:

և 5) Մնացած լրագիրներին թոյլ է տրե-
վում արտատպել այդ յայտարարութիւնը:

2 (3)

ՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Նորերում «Терскія Вѣдо-
мости» ուսու լրագրում կարդա-
ցինք մի նամակ Մոզդուկից, որի մէջ
նկարագրվում է այդ քաղաքի ու-
սումնարանների դրութիւնը: Հա-
յոց ուսումնարանները, ասում է
թղթակիցը, աւելի լաւ դրութեան
մէջ են գտնվում, քան թէ քա-
ղաքի մնացած ուսումնարաններ,
բայց նրանց սպառնում է, գուցէ

մտիկ ապագայում, կատարեալ
փակումն, որովհետեւ ուսման ծա-
րաւը ունեցող նողայները և չէր-
կէզները չեն ընդունվում այդ ու-
սումնարանները և այդ պատճա-
ռով միտք ծնվեցաւ հիմնել մի
պրոգրիմապիա, որին կը զօհի թէ
հայոց հոգեւոր դպրոցի, թէ քա-
ղաքային ուսումնարանի գոյու-
թիւնը....

Այդ հանգամանքը ծնեցրեց մեր
մէջ հետեւեալ մտածումները:

Հայոց ուսումնարանները ամեն
տեղ մի նեղ, սահմանափակ գոր-
ծունէութեան շրջան ունեն, նրանք
երբէք իրանց համար նպատակ
չեն դնում անխտիր կերպով ըն-
դունել այլ և այլ ազգութիւնների
երեխաներին, որոնք մինչև անգամ
ցանկութիւն են յայտնում ուսում
ստանալ այդ ուսումնարաններում:

Հայոց ուսումնարանները նուի-
րելով իրանց ծառայութիւնը մի-
միայն հայ մատաղ սերունդի դա-
ստութեանը, կարող են գոյու-
թիւն ունենալ միայն այնտեղ, որ-
տեղ ինքն հայոց ազգաբնակու-
թիւնը խիտ է:

Այդ երեւոյթը մենք նկատում
ենք Անդրկովկասում, որտեղ հա-
յոց հասարակութիւնը պահպա-
նել է և կը պահպանէ իրան յա-
տուկ ազգային գոյնը, այն ինչ Կով-
կասեան սարերի շղթայի այն կողմը,
Կովկասում, հայերը աւելի ցրված
և աւելի սակաւաթիւ լինելով, քանի
դնում են օտարանում են, կորց-
նում են իրանց առանձնական յատ-
կութիւնները: Հայերը երբէք չեն
ունեցել մի սիօն արնի րի, առա-
քեալների յատկութիւնը, — այդ
մեծ պակասութիւն է: Այդ է
պատճառը որ հայերը, թէ և աւելի
բարձր են իրանց մտաւոր և բարո-
յական զարգացմամբ, աւելի բարձր
են նիւթական ապահովութեամբ,
քան թէ նրանց շրջապատող դա-
նազան ազգերը, ինչպէս թուրքերը,
քուրդերը, օսերը, լազերը և այլն,
այնու ամենայնիւ երբէք կը թու-
ղական ներգործութիւն չեն ունե-
ցել, և ընդունակ չեն ունենալ
իրանց այդ շրջապատող ցեղերի
վրա:

Ընդհակառակն հայը աւելի հեշտ
ենթարկվում է ուրիշի ազդեցու-

թեանը, քան թէ իրան ենթար-
կէր զարգացման աւելի ստոր աս-
տիճանի վրա կանգնած շրջապա-
տող տարրերը....

Իսկ Անդրկովկասում հայը
այնպէս էլ ունի մի մեծ գործ կա-
տարելու, այն է պէտք է իր ազ-
գային շրջանի վրա որ բաւական
խիտ է այստեղ, ազգեցութիւն ներ-
գործէ իր ուսումնարանների միջո-
ցով:

Իսկ Կովկասեան սարերի շղթայի
այն կողմը, Կովկասում, երեխայու-
թիւն կը լինէր երազել հայոց ու-
սումնարանների համար այդ տե-
սակ ապագայ: Այնտեղ հայերը
շատ փոքր թիւով և ցրված են, և
բացի սորանից իրանց բնաւորու-
թեանը յատուկ ոգով անընդու-
նակ են մինչև անգամ կիսավայ-
րենի նողայների և չէրկէզների վրա
կը թողական ազդեցութիւն ունե-
նալ....

Ուրեմն այնտեղ նրանց սեփա-
կան ուսումնարաններին էլ, որոնք
ժամանակաւորապէս առանձնական
դրութիւնը պահպանում են, ըս-
պառնում է, երեւի մտիկ ապագա-
յում, կատարեալ կորուստ....

Իզուր կը լինէր յափշտակվել
անիրաւործել երազներով....

Պէտք է խոստովանվել որ հա-
յոց դպրոցները Կովկասեան սա-
րերի այն կողմը չունեն և չեն կարող
ապագայ գոյութիւն ունենալ....

Յաւալի է մի մարդու խոստո-
վանվել որ նրա մարմնի անգամնե-
րից մինը անբժշկելի հիւանդ է, և
նրան պէտք է կտրել, կամ սառ-
նասրտութեամբ նայել ինչպէս բը-
ժիշկը կտրում է, — բայց լաւ է
առաջուց խոստովանվել ճշմարտու-
թիւնը, քան թէ օրօրել իր գլուխը
անհասանել երազներով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԲԱՆԻ ԽՈՍԻՐ ԼՐԱԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուսաց լրագիրները այժմեան ժամանա-
կին մեծ նիւթական օգուտներ են տեսնում
իրանց հրատարակութեան, որովհետեւ բա-
ժանորդների թիւը աստիկ բարձրանում է
օրից օր, այնպէս որ բաժանորդներին այլ ևս
ոչ թէ հարկւնեցողի այլ հազարներով են
համարում: Օրինակի համար «Нива» լրագիրը
ունի 23 հազար բաժանորդ, իսկ լրագիրներ

ինչպէս «Крыжовник» և «Стрекоза» և այլն,
որոնք միայն անցեալ տարուց սկսեցին հրա-
տարակվել, մօտ հինգ, վեց հազար ստորա-
գրող ունեն: Երկու մայրաքաղաքներում հրա-
տարակվող լրագիրների ամենափոքր թիւ բա-
ժանորդների լինում է 2—3 հազար: Ի հարկէ
բաժանորդների մեծ թիւ միջոց է տալիս լա-
գրի խմբագրութեանը միշտ լաւացնել լա-
գիրը, վարձատրել աշխատակիցներին և մինչև
անգամ զանազան պարգևներ անել բաժա-
նորդներին: Այսպէս «Нива» տարվայ վերջում
կարողացաւ տալ իր բաժանորդներին, որպէս
պարգև մի պատկեր «Спящая красавица» որ
դժուար է գնել երկու ռուբլով (իսկ ինքն
լրագրի տարեկան գինը 5 ռուբլ է): Նմանա-
պէս և «Пчела», «Всемирная Иллюстрация» և
այլ շաբաթաթերթերը այդ անում են:

Ուրեմն ուսաց լրագրութիւնը հասնում է
այն դրութեան, երբ լրագիրը և լրագրու-
թիւնը անհրաժեշտ պահանջ են գառնում
հասարակութեան համար, թէ և ի հարկէ
ուսաց մամուլի նիւթական դրութիւնը չէ
հասել զարգացման այն աստիճանին, որին
հասել է մամուլը Ամերիկայում և արեւմե-
տեան եւրոպայում:

Իսկ ինչ դրութեան մէջ է հայոց մամուլը
մեզանում....

Հայոց պարբերական հրատարակութիւններ
ունեն շատ շատ վեց կամ եօթ հարիւր բա-
ժանորդ: Պատահում է որ մի լրագիր կամ
ամսագիր, տարներով հրատարակվելով, ունի
միայն հարիւր բաժանորդ: Այսպէս շատ ան-
գամ հայ խմբագիրները նիւթական օգուտի
տեղ վնաս են քաշում, մասնաւոր երբ բա-
ժանորդների մի մասը նիւթա է ստանում
լրագիրը, որ ոչ մի ուրիշ երկրում երբէք չէ
լինում:

Հայը կը վատնի փողեր անձնական ուրա-
խութեան, փառասիրութեան, քէֆի համար,
անհաշիւ կը զցէ հինգ, տաս, քսան, յիսուն,
րուբլ, — բայց կափոսայ մի քանի ռուբլ լա-
գրի համար տալու....

Շատ օրինակներ ենք տեսնում, որ հայը
չինչ է տալիս կամ մի եկեղեցի, կամ մի ու-
սումնարան, կամ մինչև անգամ մի աւելի
աննշան հիմնարկութեան ձեռք է տալիս և
այս բոլորը անում է անպատճառ միայնակ, որ
միայնակ փառասիրով, և երբէք չի ցանկա-
նայ որ մի բան գլուխ տանի ընկերութեամբ
և չի էլ ուղեկայ որ ուրիշի ձեռնարկածը
աջողվի: Ուրիշի ձեռքով հրատարակված լա-
րագրին զովել հային երեւում է իբր թէ նա
մի գործ ընկերութեամբ է բռնում այն մար-
դու հետ որ տանում է լրագրի գործը, և
որովհետեւ նա այդ դիպուածում որպէս բա-
ժանորդ միայն երկրորդական դեր է խաղում,
— նորա փառասիրութեան և անձնասիրու-
թեան զգացմունքը վերաւորվում է.... «Միթէ
ես ուրիշից կարող եմ բան սովորել....»

Հայը կատարեալ հակադրական, հակա-
հասարակական բնաւորութիւն ունի: Տեսնե-
լով թէ ուրիշը մի բան է անում, նա կու-
զենար նրա արածը քանդել, ոչնչացնել և
ինքն անել:

Հայի համար մի հին, եղած և հաստատ
հիմք ստացած ձեռնարկութիւն արժէք չունի:
Այդ է պատճառը որ մենք ունենք շատ ու-
սումնարաններ, շատ եկեղեցիներ, շատ լա-
գիրներ, օրից օր դրանց թիւը աւելանում է
և բոլորն էլ անպիտան դրութեան մէջ են և
վատ են գնում:

ի Կ. Պօլտոյ առ եւրոպական լրագիրս հ
ղորդեալ լըցոյ նայելով, Բարձրագոյն Դրան ն
խարարք բացորոշապէս յայտնել են զեզպ
նաց՝ կայսերական կառավարութեան բռն
ընթացն 'ի մասին առաջարկութեանց՝ ո
պիտի լինեն իրեն 'ի միջազգային Խորհրդա
ցութեան: Ահաւասիկ յիշեալ ընթացքը:
Բարձրագոյն Դուռն յօժարամիտ է ընդ

նեղու և ի գործ դնելու գաղափարի առաջարկութեան վասն Պոստիոյ, Հերթէօլմիւրի և Պոլիարիոյ, չվարանելով ամենեւին իւր հաւանութիւնն տալ ամեն որոշմանց ըստ այսմ մասին՝ զորս Խորհրդակցութիւնն իւր անդամաց մեծագոյն մասի հաճութեամբ պիտի ընէ, միայն իրեն կը վերապահէ շնորհիւ իւր միւս քրիստոնեայ հպատակաց զմի և նոյն վարչական բարեկարգութիւններն՝ զորս պիտի տայ յիշեալ երկը Սլովենաց գաղափարաց Սակայն պատերազմի պատճառ պիտի նկատէ զոր և է առանձնական միջամտութիւն ի կողմանէ անբութեանց և մասնաւորապէս զգրաւուած Պոլիարիոյ ի Ռուսիայէ, բայց ի դիպուածի՝ յորում Ռուսաց զօրք պիտի մտնէին յերկիրն Օսմանեան և Աւստրիան ի մի և նոյն ժամանակի զինուորական զօրութեամբ պիտի գրաւէր Պոսնիան և զՀերցեգովին, Բարձրագոյն Ռուսն չը կրնայով նկատել զԱւստրիան իրեն թշնամի օսմանեան տէրութեան, պատերազմի պատճառ պիտի չը համարէր զայս օրինակ ընթացքն Աւստրիոյ:

Այս լոյս իբրեւ հաստատութիւն կը համարուի անշուշտ՝ Պերլինի Լոնտոնի «Times» օրագրոյն յուղարկեալ հեռագիր մի, որ կը ծանուցանէ թէ Բ. Ռուսն ետ քաշեց Պոսնիայէն և Հերցեգովինէն բոլոր իւր զօրադիրներն, որոշեալ լինելով ամենեւին ընդդիմութիւն չենել ի կողմանէ Աւստրիոյ գրաւման յիշեալ գաղափար և թէ Աւստրիոյ կառավարութիւնն ի դիպուածի պատերազմի և զինի Ռուսիոյ զօրաբանակին ի Մոլտավիա մտնելուն, անմիջապէս զինուորական բաւական զօրութեամբ պիտի բռնէ զնեղ անցքն՝ ուսկից ի Վրանսիական և ի Մոլտավիա կերթուի:

(Արշալոյս Արարատեան)

ԹԻԻԲԻԱ

Վերջին հերթերից տեղեկանում ենք թէ Սերբիան հրաժարվում է Ռիքթայի մեծ վեղեր Միգհադ փաշայի առաջարկութիւնն ընդունել՝ սկսել Բ. Վրան հետ դադարի բանակցութիւնները:—Հեռագիրը հաղորդում է նոյնպէս որ Բաղդադի մէջ ընկալող եւրոպական հիւպատոսները, ստանալով հրամաններ իրանց տէրութիւններից, գնացին Ցէտինիէ Զերնորթայի քաղաքը, որ համոզելն իշխան Նիկոլայովին խաղաղութիւն կապել անմիջապէս թիւրքաց տէրութեան հետ:—Միջադպրային հեռագրական ընկերութիւնը հաղորդում է որ Վիեննայի «Politische Correspondenz» լրագրի խօսքերին նայելով Սերբիայի իշխան Միլան պատասխանելով Ռիքթայի մեծ վեղեր Միգհադ փաշայի առաջարկութեանը սկսել անմիջական բանակցութիւնները թիւրքաց տէրութեան հետ, պատասխանեց թէ պատրաստ է ընդունել այդ առաջարկութիւնը: Սերբիական տէրութիւնը յոյս ունի որ Ռիքթայի առաջարկութիւնն ներքին զլխաւոր սղուծելները նոյն կը լինեն որոնք պաշտպանած են Լեւոպական մեծ պետութիւնները Կոնֆէրենցիայում: Բանակցութիւնները երեւի կը կատարվեն Վիեննայում:

ՍՊԱՆԻԱ

Միւս և որ ամենքը, Եւրոպայի ամբողջ հասարակական կարծիքը զբաղված է արեւելքում կատարվող անցքերով, զբաղված է արեւելեան հարցով: Եւրոպայի մի քանի երկրների քաղաքական կենտրոնի մէջ պատահող փոփոխութիւնները գրեթէ անկատարել են անցնում շատերի համար: Ո՞վ է մտածում այս քաղաքական, Սպանիայի վրա... Բայց այնու ամենայնիւ այդ երկրում կատարվում են այնպիսի քաղաքական անցքեր, որոնք արժանի են ուշադրութեան: Յայտնի է որ

Սպանիան դարձրել կազմված էր գրեթէ միմեանցից բոլորովին անկախ երկիրներից, որոնցից ամեն միւր իր ինքնավարութիւնն ունէր, և գրեթէ անկախ էր կենտրոնից: Կառավարական ինքնավարութիւնը վտանգաւոր էր թուում միշտ սպանիական կենտրոնական պետական իշխանութեանը, և Սպանիայի թափափուկութիւնը միշտ աշխատելու էին լինում քանդել այդ գաղափարական ինքնավարութիւնը: Ներքին նահանգներից միւր, այն է Նավարրայի նահանգը, մինչև վերջին ժամանակը, այն է մինչև Կարլոս 5-րդի շարժման խաղաղացիները, անկախ էր և ունէր մեծ արտօնութիւններ, ունէր գաղափարական ինքնավարութեան սխառման (ֆուէրստենը): Այդ նահանգը մինչև վերջին ժամանակները պետական հարկեր չէր վճարում սպանիական կենտրոնական իշխանութեանը և զօրք չէր տալիս նրան: Այժմ սպանիական տէրութիւնը սկսեց պահանջել այդ նահանգից մնացած նահանգներից հաւասար հարկեր և նոյնպէս զօրքի մի յայտնի քանակութիւն: Այդ պատճառով լուր տարածվեցաւ մինչև անգամ որ Նավարրայի բնակիչները արհմահեղ ապստամբութիւն էին արել, բայց այդ լուրը պաշտօնապէս հերքվեցաւ Փարիզի սպանիական դեսպանատանից: Պաշտօնական թղթի մէջ ասված է, թէ որքան էլ՝ ավստային նավարրայիները իրանց կորցրած ինքնավարութեան մասին, բայց նոքա ոչինչ ընդդիմադրութիւն չեն արել պետական վերանորոգութեանը և անտրոնն չեն ընդարկում են անհրաժեշտութեանը:

ՖԻՆԱՆՍԻԱ

Վերջին օրերը յանկարծ ամենադանդաղ ամենակատարել պոլիտիկ սկսվեցաւ Ֆրանսիական և գերմանական լրագրիների մէջ: Որովհետև բանակցութիւն անող լրագրիներից շատերը թէ Ֆրանսիայի, և թէ Գերմանիայի կողմը համարվում են կիսապաշտօնական կամ գոնէ այս կամ այն ազդեցութիւն ունեցող կուսակցութեան օրգան, այդ պատճառով այդ յանկարծ ծագած լրագրական պոլիտիկային եւրոպական հասարակական կարծիքը ակամայ տուեց մի քաղաքական նշանակութիւն: Ֆրանսիական մամուլը սկսեց զայրացած կերպով մեղադրել Կ. Պոլսի գերմանական դեսպան Քարոն Վերտերին թէ զա երկրի մի և կեղծաւոր զիջել է բռնում Կ. Պոլսի կոնֆերենցիայում: Բերլինի «National Zeitung» լրագիրը չը կասկածելով Ֆրանսիական տէրութեան խաղաղաբէ ձգտումները, մեղադրում էր ըօյալիստներին կուսակցութիւնը, որ սա կամեւում է պատերազմ յարուցանել Գերմանիայի և Ֆրանսիայի մէջ, որպէս զի գործերի խառն և բազմաբնույթ զրուծիցն օգուտիով, վայր զիջ հանրապետական կառավարութիւնը և հրատարակել Ֆրանսիայում սահմանադրական թաղաւորութիւն: Գերմանական «Norddeutsche Allg. Zeitg.» յարձակվելով Ֆրանսիական ինտենդանտութեան վրա, մեղադրում էր նրան որ իբր թէ նա դիմամբ ահագին քանակութեամբ հաց է առնում Ունգարիայում, որպէս զի դժուարացնէ գերմանական զօրքին այնտեղից իր հացի պաշարը կանոնաւոր կերպով ստանալու: Ֆրանսիական լրագրութիւնը իր կողմից մեղադրում էր Գերմանիային թէ սա արուեստական կերպով ուղղում է անբաւարարութիւն յարուցանել երկու պետութիւնների մէջ և նրանց երկուսն էլ զրգիլ դնելու պատերազմը: «Republique Française» տպեց թղթակցութիւններ Մէլից և Ստրասբուրգից, որոնց մէջ պատմվում էր թէ այդ երկու քաղաքներում գերմանացիները եռանդոտ կերպով շարունակում են զինուորական պատրաստութիւններ, ամբողջների շինութիւններ և ունեն այդ ամբողջներում հացի պաշար այնպիսի քանակութեամբ, որ ոչ թէ միայն պատերազմի տեւում

զրուծեան համար, այլ այդ երկու քաղաքների բնակիչներին երկու տարվա ընթացքում կերակրելու բաւական կը լինի: Վերջապէս գերմանական և ֆրանսիական լրագրիների մէջ ծագած կատաղի թշնամութիւնը հաշտեցրին Ֆրանսիական կիսապաշտօնական լրագրիները, յայտնելով որ չը նայելով Բերլինի լրագրութեան կողմից Ֆրանսիայի վրա յարձակումներին, Ֆրանսիայի և Գերմանիայի յարաբերութիւնները շարունակվում են բարեկամական լինել:

ԳԵՐՄԱՆԻԱ

Բերլինի մէջ համոզված են երևում, որ արեւելեան խնդրի լուծումն հնարաւոր է խաղաղական ճանապարհով: Բոլորիցից զերաւումը ուսուց զօրքերով այլ ևս չէ համարվում որպէս հաշտութեան միակ պայման: Իշխան Բիսմարկի ատենախօսութիւն անելով գերմանական պարլամենտի մէջ, այսպէս խօսեց՝ «Այն գործակցութիւնը որ Ռուսաստանը մեզանից խնդրում է Կ. Պոլսի կոնֆերենցիայի մէջ Թիւրքահայաստանի քրիստոնեաների դրութեան բարւոքումը ձեռք բերելու համար անվիճարանելի է, և կատարելապէս արդարացիում է այն մեր համակրական զգացմունքը որ ունենք դէպի քրիստոնեայ եղբայրները, և նոյնպէս այն պահանջները, որ ներկայ քաղաքական կացութենից անբաժան են»: Այս խօսքերը, ասում է Ֆրանսիական «La Liberté» լրագիրը կարող են առանց փոփոխութեան զրգիլ թէ Իէկազել, թէ Մադրաշէի, թէ լորդ Դերբիի բերանը: Շատ անգամ, աւելացնում է Ֆրանսիական լրագիրը, մենք կրկնած ենք այն մեր համոզմունքը, թէ մեծ պետութիւնները համաձայն են այս կէտի վերաբերութեամբ: Իշխան Բիսմարկ, շարունակում է յիշեալ թերթը, խորշեցաւ անհարկութիւն անել այն պատահական դէպքի վրա, որ իբր թէ ուսուց զօրքը պէտք է գրաւէր Բոլգարիա: Արեւելեան խնդրի մէջ, շարունակում է թերթը, միակ նպատակը և ջանքը պէտք է լինի՝ մեծ պետութիւնների մէջ խաղաղութիւնը հաստատուն պահելու, զոյգանելով նրանց մէջ, որպիսի կարելի է, համաձայնութիւն:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑԻՑ

Ստրասբուրգ. 12-ին Յունի. 77

Յայտնի իրողութիւն է որ գերմանական ազգը քաղաքականապէս շատ աւելի պոկատ զարգացած է քան թէ նորա հարեան բոսնիական ազգերը, Ֆրանսիացիները և մասնաւոր իտալացիները: Չը որոնելով պատմական պատճառներ որոնք սովորել են Գերմանացիներին յետ մնալ քաղաքական զարգացման մէջ՝ իրողութիւնը մնում է անուրախելի: Գերմանացին լայն իրաւունքներ վայելելով շատ հազիւ նրանց զօրք է դնում նա սովոր է միշտ գոհ լինել և հաւատալ իր կառավարութեանը և այդ պատճառով աւելորդ է համարում վերաբնակչութիւն անել կամ քննութեան ենթարկել կառավարութեան վարմունքը: Գերմանացին բոլորովին գոհ է և կարծում է որ իր պարտաւորութիւնը կատարել է երբ ընտրել է իր համար մի ներկայացուցչին ազգային պարլամենտի համար, իսկ այդ ներկայացուցչին, պատգամաւորի գործերը քննելու, նա իր բանն էլ չէ համարում՝ ընտրող կատարելու հաւատ է ընծայում իր ընտրվածին և էլ ոչինչ մէջ չէ խառնվում: Շատերը մինչև անգամ այնքան հեռու չեն գնում, այլ և ընտրութիւնների ժամանակ անոց են մնում և հրաժարվում են իրանց քաղաքական իրաւունքից և պարտաւորութիւնից: Յայտնի է որ Գերմանիայի քաղաքական օրէնքի զօրութեամբ ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունի ամեն ոք, որ 25 տարեկան հասակի է հասել և որ միակ բացառութիւն է անում այդ օրէնքը զօրքի համար: Չինուորական ծառայութեան մէջ գտնվողները թէ և 25 տարեկան և զորանից հասակով էլ լինեն ձայնի իրաւունքից զրկված են:

Ինչ և իցէ կէթ Գերմանացու մէջ մի անգամ ծնվում է զգացմունք որ նա քաղաքական իրաւունքներ ունի, զա վնաս է այնպիսի քաղաքականութեանը, որոնք զօրք դնել: Չարմանալի չէ ուրեմն որ ընտրութիւնների ժամանակը Գերմանացու շատ զրգուշած ժամանակ է լինում: Այստեղ է գլխաւորապէս նկատվում կուսակցութիւնների զանազանութիւնը, նրանց իրար դէմ վարած պատերազմը, նրանց ձգտումները, նրանց ուղղութիւնը և այն սկզբունքները, որոնք նրանք հիմնական են համարում իրանց երկրի զարգացման համար: Այսպիսի զգուշանալու սկսվում է փոքր ի շատէ շարժուն կենտրոն, ազդեցիկներ կուսակցական օրգանների կոմիտէների և լրագրիների կողմից: Ամեն տեղ ժողովներ, վեճեր, այս կամ այն կուսակցութեան պաշտպանելու կամ նրա ազդեցութեան դէմ պատերազմելու համար:

Այս տեսակ օրեր էին այս վերջին օրերը: Ամբողջ Գերմանացու ընտրութիւններ էին կատարվում Բայնստագի համար: Պատգամաւորները որոնք այստեղ երեք տարով են ընտրվում յունիարիս սկզբում վերջացրել էին իրանց եռամսայ պաշտօնը: Այս տարվա ընտրութիւնները այն կողմից էին հետաքրքիր, որ այս անգամ պիտի ասպարէզ դուրս գային աւելի զօրեղացած մի քանի փոքր կուսակցութիւններ կուսակցական ազգային-ազատական իրան անուանող կուսակցութեան պէս, որ մինչև այժմ ամենազօրեղ կուսակցութիւն էր կազմում Բայնստագի մէջ և միշտ բազմութիւնը ունէր իր կողմը: Այս անգամ ազդեցիկները սաստկացան նորա դէմ և այն էլ ամենատարբեր կողմերից: «առաջադէմ» կուսակցութիւնը որ մասամբ ազգային կուսակցութեան հետ միասին էր գնում, վերջին ամիսներում բոլորովին նորանից անջատվեցաւ: Միւս կողմից զորա դէմ բարձրացան պահպանողականները, վերնորոնի կուսակցութիւնը (կրեթականները) և «սոցիալ-դեմոկրատները»: Եւ այժմ որ ընտրութիւնների մի մասն հրատարակվեցաւ, երևում է որ ընդդիմադրութեան կուսակցութիւնների ազդեցիկութեանը ապարդիւն չեղան: Կրեթականները, սոցիալ-դեմոկրատները և պահպանողականները աւելի մեծ թւով կը լինեն նոր Բայնստագի մէջ:

Բայց ամենահետաքրքիր տեսարան, նշանաւոր իր հետեւներով ներկայացնում էր էլզաս-Լոթարինգիան, որի վիճակի վրա դարձած էր ամբողջ Գերմանիայի ուշադրութիւնը: Յայտնի է որ երեք տարի առաջ այս գաղափարները այնպիսի պատգամաւորները դարձրին, որոնք բոլոր ներկայացրին գաղափարներ Գերմանիայի հետ միացնելու մասին: «Բողոք» կուսակցութիւնը չէ կամենում ընդունել Ֆրանց-Ֆուրտի հաշտութեան որոշումները և համարում է Էլզաս-Լոթարինգիայի միացնելը գերմանական կայսրութեան հետ իբրեւ մի բան գործ, որ ընդդէմ է բոլոր միջազգային իրաւունքներին:

Երեք տարի առաջ պատգամաւորները Բերլին գնացին միմյանց նպատակով որ բոլորեն այդ բանի գործի դէմ և կուսակցութեան արտապատիւ եղաւ պ. Տոյլ (Teutsch): Այս անցքից յետոյ բոլոր պատգամաւորները իրանց պարտաւորութիւնը կատարած համարելով, թողին Բերլին և վերադարձան իրանց երկրը, միայն երեք պատգամաւորների բացառութեամբ, որոնք կը դերականներ լինելով, մասամբ միացան կենտրոնի կուսակցութեան հետ, երեք տարվայ միջոցում Էլզաս-Լոթարինգիայի ժողովուրդը, ընտրողները ժամանակ ունեցան իրանց վիճակի մասին մտածել: Այս միջոցին կայացաւ Ստրասբուրգի մէջ տեղական պատգամաւորների ժողովը, որ կառավարութեան ներկայացուցիչների ներկայութեամբ պիտի մի քանի տեղական հարցեր մշակել: Ազգամիջցաւ և աւելի նշանակութիւն ստացաւ մի կուսակցութիւն, որ լոկ բողոք անպտուղ ձգտումն էր համարում, այլ կամենում էր ընդունելով Ֆրանցֆուրտի հաշտութիւնը իբրեւ կատարված իրողութիւն, այս հիւրի վրա կանգնել և պաշտպանել երկրի իրաւունքները և պատգամաւորները: Այս կուսակցութիւնը որ էլզասական կամ առեւտու օմիստոն երի (ինքնավարութեան) անունը ընդունեց, պահանջում է իր երկրի համար համահաւասար իրաւունքներ մնացած Գերմանիայի հետ, պահանջում է, որ Էլզաս-Լոթարինգիան էլ մնացած գերմանական երկրներին նման իրաւունք ունենար ինքն կառավարելու իր երկրի ներքին, տնտեսական գործերը, մի ներկայացուցիչ ունենար գաղապարական խորհրդի մէջ (Bundsrath): Բայնստագի հաւասարակշռութիւնը իր քա-

